

ՀՈՒՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵՔ-ՐԵԼԻ

(Մենդյան 100-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դպրոցի Պ. Մ. ՄՈՒՐԱՂՅԱՆ

Դասական բանասիրության ներկայացուցիչներից քչերին վիճակվեց հայագիտության նոր սերնդի տեական ուղեկիցն ու լծակիցը լինել: Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Րեելի առաջին հոդվածներն ու ուսումնասիրությունները երևացին այն շրջանում, երբ հայագիտության ու վրացագիտության հիմնական կենտրոնները տակավին դրսում էին գտնվում, որքան էլ ազնիվ ու նվիրական գործունեությամբ՝ այնուամենայնիվ դրսում: Լեոն Մելիքսեթ-Րեելը իր կարողությունների նվիրաբերումով մասնակցեց հայրենական կրթօջախների ստեղծմանը և ավելի քան հիսուն տարի ստեղծագործեց կովկասագիտության երևելի ու սկսնակ ներկայացուցիչների հետ կողք-կողքի:

Լ. Մելիքսեթ-Րեելը ծնվել է 1890 թ. սեպտեմբերի 26-ին, Թիֆլիսում: Օրբելիանու պանսիոնում գրաճանաչություն սովորելուց հետո (1897—1899), ընդունվում է Թիֆլիսի ռեալական դպրոցը (1899—1908), իսկ ապա՝ Օդեսայի համալսարանը: Իրավաբանական ֆակուլտետում սովորելուն ղուգրնթաց, իբրև աղատ ունկնդիր, հաճախում նույն համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը և աշակերտում է Ա. Ալմասովին (կանոնական իրավունք), Ա. Շպակովին (ռուսական իրավունքի պատմություն), Ա. Թոմսոնին (լեզվաբանության ներածություն), Մ. Պոպրուժենկոյին (սլավոնների պատմություն), Է. Ֆոն-Շտերնին (հնագիտություն) և այլ գիտնականների: Համալսարանական տարիներին երիտասարդ Լ. Մելիքսեթ-Րեելը մասնավոր հետաքրքրություն է ցուցաբերում հնագիտության վերաբերմամբ: Ուսումնասիրության նպատակով մի քանի անգամ նա ճամփորդում է Ռուսաստանի հայկական բնակավայրեր ունեցող մասերում՝ Ուկրաինա, Ղրիմ և այլն: 1913 թ. ավարտում է Օդեսայի համալսարանը և նորից Թիֆլիս վերադառնում: Ուսանողական տարիներին գրված մեկ տասնյակից ավելի գիտական աշխատություններն ու հաղորդումները արդեն գրավել էին հայագետ-կովկասագետների ուշադրությունը: 21—23 տարեկան Մելիքսեթ-Րեելի աշխատանքների մասին գրախոսություններ են հրապարակում Լ. Քալանթարը, Հ. Մովսիսյանը, Գ. Թումանովը, Ա. Խախանաշվիլին և վերջապես՝ ակադեմիկոս Ն. Մառը: Ինչ խոսք, քննության առնվող հարցերը (օրինակ՝ «Վրացիների ազգակցությունը իսպանացիների հետ՝ ըստ հին աղբյուրների», «Հայկական հնությունները Աքերմանում», «Ռուսիո հարավում բնակվող հայոց պատմության նյութերից», «Հայոց գերագույն պատրիարքի իրավական դրությունը», «Օդեսայում հայտնաբերված XV դարի Շարակնոցը» և այլն, բոլորն էլ գրված ռուսերեն) ոչ հավասար գիտական լուծում են ստացել, այդ պատճառով էլ գրախոսները բավական կարևոր դիտողություններ են անում: Բայց գլխավորն այն է, որ Լ. Մելիքսեթ-Րեելը տակավին երիտասարդ հասակում ձեռնամուխ է լինում գիտական լուրջ հարցերի քննության, որոնց մի մասին նա հետագայում նորից անդադարձավ: Թիֆլիսում, մինչև համալսարանում հայոց լեզվի դասախոս նշանակվելը (1918 թ.), վարում

է մի շարք պաշտոններ, այդ թվում՝ Հայոց ազգագրական-խմբագրական մասնաժողովի անդամ-քարտուղար (նախագահ՝ Ե. Լալայան), Մոսկովյան հնագիտական ընկերության Կովկասյան բաժանմունքի իսկական անդամ և ապա՝ գիտական քարտուղար, վրաց լեզվի և պատմության դասախոս Թիֆլիսի երրորդ արական գիմնազիայում և այլն:

Թիֆլիսի համալսարանի բացումը արդարև խոշոր իրադարձություն էր: Նորաբաց համալսարանում կար երկու վրացագետ-հայագետ՝ ինքը Ի. Ջավախիշվիլին և նրա ու Մառի աշակերտ Ա. Շանիձեն: Մելիքսեթ-Քեկի հրավիրումը նախ խթանում էր հայագիտական կադրերի պատրաստման հնարավորությունները և ապա նոր ու մեծ հեռանկարներ բացում երիտասարդ Լ. Մելիքսեթ-Քեկի համար:

Լայն հետաքրքրություններ ու պատշաճ պատրաստություն ունեցող գիտնականը միաժամանակ ու արդյունավոր աշխատանքներ է կատարում գիտական մի քանի մարզերում՝ գրականության պատմություն, բանահյուսություն, վիմագրագիտություն, հնագիտություն, բնագրագիտություն, լեզվաբանություն, հնագրագիտություն, արվեստագիտություն, աղբյուրագիտություն, իրավունքի պատմություն, ազգագրություն, մատենագիտություն, գեղարվեստական թարգմանություն և այլն: Նրա առաջին ծավալուն մենագրությունը վերաբերում է XI—XIII դդ. հյուսիսային Հայաստանի կրթօջախներում զարգացած մատենագրության ուսումնասիրությանը՝ «Վարդապետը Հայոց հյուսիսային կողմանց և նրանց ինքնությունը» խորագրով (1928 թ., Թիֆլիս, վրացերեն): Ուսումնասիրությունը գրված է ինչպես հայ մատենագիրներից շատերի գրական ժառանգությունը վեր հանելու, այնպես էլ XI—XIII դդ. հայ-վրացական պատմական-մշակութային փոխհարաբերությունները լուսաբանելու նպատակադրումով: Պատմական Գուդարք—Լոռն—Տաշիրը—Վրաց դաշտ—Սևորդյաց աշխարհ—Սոմխեթ հատկացությունների պատմաաշխարհագրական ճշգրտումներից հետո, գրքում բացահայտվում են տեղիս կրթօջախներում ստեղծված մատենագրության բնույթն ու դրդապատճառները: XI—XIII դդ. Հայաստանի հյուսիսային գավառներում նկատելիորեն ուժեղանում է դավանական հակամարտությունը. հյուսիսային վարդապետները բանավիճում էին միաժամանակ և՛ կիլիկյան հայ գործիչների (Ներսես Շնորհալի, Գրիգոր Տղա, Ներսես Լամբրոնացի), և՛ վրաց հոգևորականների հետ: Արդ պատճառով էլ Մատթևոս Հաղբատեցու, Վարդան, Հակոբ, Անանիա Սանահնեցիների, Հովհաննես Սարկավագի, Վարդան Հաղբատեցու, Դավիթ Քոռայրեցու մեզ հասած երկերը լավագույն սկզբնաղբյուր են այս շրջանի ինչպես հայ մշակութային պատմության, այնպես էլ հայ-վրացական պատմամշակութային փոխհարաբերությունների ուսումնասիրության համար:

«Վարդապետը Հայոց հյուսիսային կողմանց» աշխատության մեջ որոշ հեղինակներ (Հովհաննես Սարկավագ, Մխիթար Գոշ) ներկայացված են նրանց վերաբերող աղբյուրների լիակատար հավաքումով ու քննարկմամբ: Նրանցից յուրաքանչյուրի մատենագրական ժառանգությունը սահմանելու և ճշտելու համար կատարված է խոշոր ու մանրազնին բանասիրական աշխատանք: Ավելին, հնարավորության դեպքում տրված են այն աղբյուրները, որոնք շատ կամ քիչ սկզբնաղբյուր են եղել տվյալ երկի համար, իսկ երբեմն էլ զուգահեռ հրապարակված են ամբողջական տեքստեր:

Այսպիսով, Լ. Մելիքսեթ-Քեկի առաջին մենագրությունը տևական ու խղճմիտ աշխատանքի արդյունք է, երկուստեք կարևորությամբ (հայագիտության և վրացագիտության համար), մանավանդ իր պատմական մասով և կից քարտեզ-տախտակներով:

Հետագայում գիտնականը բազմիցս է անդրադարձել նշված գրքում քննարկված հարցերին և ոչ սակավ լրացումներ արել: Դժբախտաբար, գիրքը շունեցավ երկրորդ հրատարակություն կամ հայերեն թարգմանություն, որը, անկասկած, ավելի ամբողջական ու հարուստ կլիներ: Ն. Ադոնցի «Պատմական ուսումնասիրությունների» հրատարակիչ Ա. Խոնդկարյանը

դրում է, թե «...հանգուցյալի գիտական գրեթե բոլոր աշխատությունները կարճ մենագրությունների բնույթ են կրում, մի հանգամանք, որ Ն. Ադոնց ինքը բացատրում էր Ն. Մառի ազդեցությունը» (Փարիզ, 1948, էջ 11)։ Այս բնորոշումը ամբողջությամբ վերաբերում է նաև Լեոն Մելիքսեթ-Քեկին, որը թեև բառացիորեն Մառի աշակերտը չէր, բայց հետևում էր նրան և իրեն նրա աշակերտ համարում։ Ի դեպ, ակադեմիկոս Ն. Մառը ուշադրությամբ էր ծանոթանում Մելիքսեթ-Քեկի ուսումնասիրություններին ու հրապարակումներին։ Բաբվում կարգացած իր դասախոսություններից մեկում, երբ ինքը տարված էր հաբեթական տեսությամբ, Մառը ցավում էր, որ թիֆլիսեցի իր աշակերտ Լ. Մելիքսեթ-Քեկը այդ ուղղությամբ արված աշխատանքները համարում է քննության կարող կամ թեմական։ Մելիքսեթ-Քեկը, ինչպես ասվեց, Մառի օրինակով ավելի նախընտրում էր հոդվածային ուսումնասիրությունը, ուսուցչի պես ինքն էլ ժամանակ շունենալով նրանք ի վերջո ի մի բերել։ 1960 թ. լույս տեսած լիակատար մատենագիտությամբ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը շուրջ 600 անուն աշխատությունների հեղինակ է, որոնց մեծ մասը, հասկանալի է, առանձին հոդվածներ ու հրապարակումներ են։



Երկրորդ ծավալուն աշխատությունը վերաբերում է վրացական աղբյուրների ուսումնասիրությանն ու թարգմանությանը։ 1934 թ. Երևանում լույս տեսավ «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» քառահատոր աշխատության Ա գիրքը (Բ-ը՝ 1936 թ., Գ-ը՝ 1955 թ.)¹։ Համառոտ առաջաբանում տրվում են նյութի բնութագրումը, նրա պատմական-աղբյուրադիտական արժեքավորումը։ Լ. Մելիքսեթ-Քեկը միանգամայն ճիշտ է նկատում, որ V—XI դդ. վրացական աղբյուրների վկայությունները Հայաստանի ու հայոց մասին դավանական հարցերի են առնչվում, սահմանափակ նյութ պարունակելով ժողովրդի պատմության համար։ Բայց նկատելու է, որ վարքաբանական, վկայաբանական երկերում տեղ գտած որոշ տեղեկություններ շփազանց կարևոր են Հայաստանի անցյալին վերաբերող մի շարք հարցերի քննության ժամանակ։ Լ. Մելիքսեթ-Քեկը չի սահմանափակվել միայն տեքստերի թարգմանությամբ, ներկայացվող աղբյուրին վերաբերող համառոտ տեղեկանք ու մատենագիտություն տալուց բացի, նա կցել է հարուստ և ինքնուրույն ուսումնասիրության արժեք ներկայացնող ծանոթագրություններ, մեծ մասամբ տեքստաբանական-աղբյուրագիտական բնույթի։ Ծիշտ է, այդ աղբյուրները իրենց ընդգրկումով ու նյութով չեն չափվում հայ մատենագիրների մոտ գտնվող Վրաստանին վերաբերող տեղեկությունների հետ, այնուամենայնիվ, ինչպես վերևում նշվեց, հույժ անհրա-

¹ Նախատեսված շորորդ գիրքը, որտեղ ամփոփվելու էին «Վիմական տարեգիրքը», հայերենից թարգմանված երկասիրությունների տարբերակները, ժողովրդական բանահյուսությունը, հավելվածներն ու կարևոր ցանկերը, ցավոք, մնաց անավարտ։

ծեղտ են ու կարևոր: Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը թեև ներկայացնում է վրա-
ռերենով արդեն հրապարակված նյութեր, բայց ոչ սակավ դեպքերում քաղ-
մածաբար թարգմանությունը կատարում է իր իսկ համեմատած կամ տպա-
գրությունն պատրաստ բնագրերից: Այսպես, օրինակ, Արսեն Սափարացու
«Վրաց ի հայոց բաժանման մասին» նրկասիրության նախ երեք ձեռագրերի
համեմատությամբ վերականգնած բնագիր է կազմել, ապա թարգմանել է
հայերեն: «Վրաց աղբյուրները...» աշխատության երեք հատորները մինչև
այժմ փաստորեն հայագետներին մատչելի հիմնական հրատարակությունն
են: Բայց անհրաժեշտ է նշել, որ հատվածաբար թարգմանություններից
օգտվելը կապված է որոշ դժվարությունների հետ: Այժմ առկա է «Վրաց
տարեգրքի» («Քարթլիս ցխովրեբա»), ինչպես նաև պատմական այլ աղ-
բյուրների գիտական հրատարակություն, որոնցից պետք է թարգմանվեն
ամբողջական ստեղծագործություններ, առկայության դեպքում՝ կցելով հին
հայերեն խմբագրությունները: Սույն անհրաժեշտությունը պրոֆ. Լ. Մելիք-
սեթ-Բեկը ոչ միայն չէր ժխտում, այլև ցավում էր, որ հայ-վրացական բա-
նասիրությամբ զբաղվող մասնագետներ (խոսքը, իհարկե, հայագետ վրա-
ցագետներին է վերաբերում) քիչ ունենք: Հատկապես շատ անելիք կա միջ-
նադարյան վրացական հրովարտականների, եկեղեցական ու աշխարհիկ այլ
փաստաթղթերի վկայությունները հայոց մասին ուսումնասիրելու և լուսա-
բանելու գործում: Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը նախատեսում էր վերաթարգ-
մանել հայկական բնագրի հիմքի վրա գոյացած վրացական որոշ խմբա-
գրություններ (օրինակ՝ նշանավոր «Պատմությունները»), բայց շատ այլ
նախատեսումների հետ այս աշխատանքը ևս անավարտ մնաց:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը իր տևական գիտական աշխատանքի ընթաց-
քում պակաս հետաքրքրություն չի ցուցաբերել հայկական ու վրացական
բնագրերն ուսումնասիրելու և հրատարակելու նկատմամբ: Դեռևս 1920 թ.
նա հրատարակում է «Վարք ս. Գրիգոր Պարթևի» վրացական խմբագրու-
թյունը, որը, ուսումնասիրողի համոզմամբ, թարգմանված է 1081 թ., հու-
նական մետափրասյան խմբագրությունից: Տարիներ անց (1952 թ.) նա
հրատարակեց Ստեփանոս Օրբելյանի «Պատմությունն նահանգին Սիսական»
երկի 66-րդ գլխի վրացական թարգմանությունը, կատարված XVIII դա-
րում: Հատկապես նշանավոր է Վախտանգ Կ-ի «Օրենսգրքի» հայկական
մասի (Մխիթար Գոշի «Դատաստանագրքի») հրատարակությունը, վրացա-
կան բնագրին նախորդող առաջաբանով (1927 թ.): Հրատարակելիչը առաջա-
բանում խոստանում է հետագայում առանձին ուսումնասիրություն նվիրել
հայոց Դատաստանագրքի XVIII դարի առաջին տասնամյակի վրացերեն
թարգմանությանը: Եթե այդպիսին պահպանվել է հանգուցյալ պրոֆեսորի
անտիպ աշխատությունների մեջ, ապա նրա հրատարակության կարևորու-
թյունը կասկածից դուրս է:

Տասնամյակներ շարունակ Քբիլիսիի համալսարանում հայ գրականու-
թյան (մատենագրության) պատմություն դասախոսելով, Լ. Մելիքսեթ-Բեկը
անհրաժեշտ է համարում վրացերեն լեզվով հայ գրականության պատմու-
թյուն հրատարակել: Այն լույս է տեսնում 1941 թ. (240 էջ): Ի դեպ, վրաց
ընթերցողը մինչ այդ ծանոթ էր ակադեմիկոս Իվանե Զավախիշվիլու «Հա-
յոց հին պատմական մատենագրություն» աշխատությանը (1935 թ.), որտեղ
ներկայացված է հայ մարտիրոսագրությունն ու վարքագրությունը V դա-
րում, վերջինիս մեջ ներառնելով Ազաթանգեղոսի և Կորյունի աշխատու-
թյունները²: Լ. Մելիքսեթ-Բեկը կազմում է ավելի ընդհանուր բնութագիր
ունեցող ձեռնարկ, որոշակի կիրառելով ակադեմիկոս Կ. Կեկելիձեի նշանա-
վոր երկհատորյակի պարբերացման փորձն ու եղանակը: Լ. Մելիքսեթ-Բեկը
հայ գրականություն հասկացությունը արդարացիորեն չի սահմանափակել

² Աշխատության առաջաբանում կարդում ենք. «Յուրաքանչյուր կրթված վրացու համար
անհրաժեշտ է իմանալ իր հարեան եղբայրական ժողովրդի՝ հայոց բազմատանջ, սակայն
անշափ հետաքրքրական ճակատագիրը» (էջ 6):

գեղարվեստական պայմանականություններ: Այստեղ համառոտակի ներկայացված են բոլոր նշանավոր մատենագիրները:

Լ. Մելիքսեթ-Քեկը չէր խուսափում և կնճռոտ կամ կնճռոտած հարցերի քննություններից, ինչպես, օրինակ, «Քորեպիսկոպոս» թե «Քորիկոս» («Իուրգեն թե» Կյուրիկե), որ սկզբունքային կարևորություն ունի Կախեթ-Ղերբեթ—Սոսիսեթի պատմության համար (1951 թ.) կամ հայոց-վրաց-աղվանների այրուքների ստեղծման խնդրի քննությունը (1957 թ.), այդպիսին է Դիոնիսիոս Արիոպաղացու և Պետրոս Վրացու նույնանձնության հարցադրումը:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկի գիտական ժառանգության մեջ քիչ չեն հնադիտական, ազգագրական և վիճաբարգիտական ուսումնասիրությունները: 1938 թ. նա հրատարակեց «Մեզալիթյան մշակույթը Վրաստանում» շափաղանց արժեքավոր ուսումնասիրությունը, հետագայում լրացնելով նոր նյութերով՝ «Մեզալիթյան մշակույթը Վրաստանում և նրա վերապրուկները Ռուսթավելու դարաշրջանում» (1943 թ.): Նա քիչ վաստակ չունի նաև միջնադարյան վրացական ու հայկական հուշարձաններն ուսումնասիրելու գործում, այդ թվում՝ Մցխեթայի տաճարը (նախապես Արմաղիի մասին), Թոնդի հուշարձանները, Թիֆլիսի վանքն ու Ս. Գևորգ եկեղեցին, Սևանի վանքը, էջմիածնի, Գարեջայի և բազմաթիվ այլ վանքեր ու մենաստաններ: Լ. Մելիքսեթ-Քեկի ուսումնասիրությունների բնորոշ կողմն աչն է, որ նա վարպետորեն է համադրում հնագիտական սովյալները պատմական սկզբնաղբյուրների ու արձանագրությունների ընձեռած վկայությունների հետ և եզրակացությունը կառուցում բացառապես փաստական նյութի վրա: Հարգատքով մնալով դասական բանասիրության ավանդույթներին, նա ամենայն բարեխղճությամբ ու մանրակրկիտությամբ ներկայացնում է իր ուսումնասիրած հարցի պատմությունը՝ միշտ և անխտիր արժանին հատուցելով իրենից առաջ հարցով զբաղվածներին: Հետևելով Ն. Մառի, Հ. Օրբելու, Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի, Կ. Կոստանյանցի և ուրիշ անվանի բանասերների ավանդներին, Լ. Մելիքսեթ-Քեկը հայկական ու վրացական վիճաբար հուշարձանները վերածնող և ուսումնասիրող լավագույն գիտնականներից էր: Նա հեղինակել է տասնյակից ավելի աշխատություններ, որտեղ վիճաբարական նորույթներ են առաջարկվում, իսկ երբեմն էլ ինքնատիպ լուսարանությամբ ներկայացվում արդեն գիտությանը հայտնիները:

Հատկապես նշանավոր է Գարեջայի մոնղոլական շրջանի (1352 թ.) քառալեզվյան (վրացերեն-հայերեն-պարսկերեն-ուլղուրերեն) արձանագրության հայտնաբերումն ու վերծանումը (1940—1953 թթ.): Վերջինիս համադրումը XIV դարի վրաց Անանունի «Ժամանակագրության» ընձեռած սովյալների հետ, թեև ոչ տառացիորեն ժամանակակից, բանասերների ու պատմաբանների առաջ մի շարք խնդիրներ է դնում: Զորս լեզուներով գրելու պարագան ինքնին բազմանշանակ երևույթ է, մանավանդ եթե նկատի առնենք սովյալ մենաստանի ուրիշ արձանագրություններ ևս, այդ թվում և հայերեն: Լ. Մելիքսեթ-Քեկը պրպտելու զարմանալի կարողություն ունի: Հաճելի անակնկալ էր 874 թ. Սևանի հայերեն արձանագրության հայտնաբերումը, որտեղ միջնադարյան վիճաբար աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է Երևան բնակավայրը: Հանգուցյալը մասնավոր ուշադրությամբ ժողովում ու հրատարակում էր Վրաստանի սահմաններում պահպանված հայերեն արձանագրությունները (Ատեն, Դմանիսի, Գարեջա, Մովկիս-Թիլեթ և այլն):

Երախտավոր գիտնականը ոչ պակաս վաստակ ունի նաև հայ և վրաց գեղարվեստական գրականության բնագավառում: Նա հատկապես զբաղվել է Սայաթ-Նովայով: 1930 թ. լույս տեսավ նրա «Սայաթ-Նովայի ինքնությունը» վրացերեն զբոլակը, որը կարևոր ավանդ է սայաթնովայագիտության մեջ: Փաստորեն առաջին անգամ նա ապացուցեց, որ Հ. Աճառյանի նկարագրած Թավրիզի ձեռագրի հիշատակագրողը ինքը Սայաթ-Նովան է: Հինգ տարի անց նա վրացերեն է թարգմանում երգչի հայերեն խաղերը և

հրապարակում մի արժեքավոր առաջարկումով: Նա կազմել է ու հրատարակել Շամշի-Մելքոյի երգերի ժողովածուն, առաջինը հրապարակ բերել Գևորգ Գորեցու երկլեզվյան բանաստեղծությունները և այլն: Լ. Մելիքսեթ-Քեկը հաճախ զբաղվել է և թարգմանություններ՝ հայերենից վրացերեն, վրացերենից հայերեն, ռուսերենից հայերեն:

Ի վերջո, երկու խոսք էլ Լ. Մելիքսեթ-Քեկի մատենագիտական աշխատությունների մասին: 1949 թ. Թբիլիսիում լույս տեսավ նրա «Վրաստանի պատմության գրավոր աղբյուրների հրատարակությունները» քարտարանի առաջին գիրքը: Այստեղ ներկայացված են V—XIX դդ. 60-ական թթ. վրացական աղբյուրները, իսկ երկրորդ բաժնում՝ հայկական աղբյուրները՝ Վրաստանի մասին: «Քարտարանը» սպառել տեղեկություններ է հաղորդում տրվյալ տեղեկատվության մասին, մասնավորապես՝ հեղինակ, խորագիր, գրչության ժամանակ, բովանդակություն, ծավալ, հրատարակություններ, թարգմանություններ, գիտական գրականություն: Նույն սկզբունքով էլ ներկայացված են հայկական աղբյուրները՝ Աղաթանգեղոսից մինչև Վարդան Օձնեցի: Ծրագրված հաջորդ երկու գրքերում, ինչպես հեղինակի առաջաբանից ենք տեղեկանում, ներկայացվելու էին Վրաստանի մասին նյութեր պարունակող այլ աղբյուրները՝ հունարեն և լատիներեն, ասորերեն, արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, սլավոներեն-ռուսերեն և արևմտաեվրոպական լեզուներով: Որքանով անձնական գրույցներից մեզ հայտնի է՝ աշխատության երկրորդ գիրքը և պատրաստ պիտի լիներ տպագրության:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկի յուրաքանչյուր աշխատություն ինքնին նաև մատենագիտություն է: Առանձին նա կազմել է մատենագիտություն՝ «Ընձենավորը» հայ գրականության մեջ», «Գրիշաշվիլու հայերեն թարգմանությունները», «Իսահակյանը վրաց գրականության մեջ» և շատ ուրիշ թեմաներով:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը իր ժողովրդի ներկայից կտրված գիտնական չէր: Նա արձագանքել է գրեթե բոլոր նշանավոր իրադարձություններին, սրտի կսկիծով բողոքել հայ և վրաց ժողովուրդների միջև խառնակություն ստեղծող խմբավորումների դեմ, հետևել ու պահպանել հայկական հնությունները Վրաստանում, վրացականը՝ Հայաստանում, միշտ հավատալով իր ժողովրդի ապագային, սիրելով նրան և թանկ գնահատելով նրա բախտակցին՝ վրաց ժողովրդին:

Լ. Մելիքսեթ-Քեկը ուղղամիտ, ուղղախոս, անկաշառ ու անմիջական անձնավորություն և գիտնական էր: Նա իր մահկանացուն կնքեց 1963 թ. սեպտեմբերին՝ անավարտ թողնելով բազում աշխատություններ ու ձեռագրեր: Հուսանք, որ հայագիտության ու վրացագիտության նոր սպասավորները առաջիկայում ձեռնամուխ կլինեն նրա լավագույն աշխատությունների համատեղ ու հատորավոր հրատարակության:

ЛЕОН МЕЛИКСЕТ-БЕК

(к 100-летию со дня рождения)

Доктор ист. наук П. М. МУРАДЯН

Резюме

Круг научных интересов проф. Леона Меликсетовича Меликсет-Бека необычайно широк и разнообразен; будучи историком-юристом по образованию, он постепенно, в процессе работы в разных функционирующих в Тбилиси научных обществах, специализировался и в археологии, этнографии, источниковедении, эпиграфике, текстологии, библиографии, истории книжности, языкознании и т. д., проявляя свою незаурядную эрудицию во всех этих областях научного кавказоведения. За пять десятилетий научной деятельности им опубликовано свыше 600 работ, многие из которых характеризуются важностью исследуемых проблем, особенно из области истории взаимоотношений народов и культур стран Закавказья. Знание надлежащей источниковой базы, библиографическая насыщенность и комплексное обращение к разноязычным и разнохарактерным материалам делали его публикации достойными пристального внимания специалистов, пусть не всегда соглашающихся с его выводами.

К сожалению, ученый не успел реализовать многих своих долголетних разысканий в виде монографий или сводов. Очень бы хотелось надеяться, что новое поколение кавказоведов, медиевисты в частности, в ближайшие годы приступят к изданию лучших работ ученого, займутся исследованием оставшегося в рукописи его научного наследия.